ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

13 հունվարի 2022թ. **N 2-Ա**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԳԱԳԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԱՐԱՔՍ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով Գագիկ Ավետիսյանի ներկայացուցիչ Արաքս Վարդանյանի 05.01.2022թ. ներկայացրած բողոքը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Դիմումատուի իրավական դիրքորոշումները և ներկայացված պահանջները

Գագիկ Ավետիսյանի կողմից 2022թ. հունվարի 5-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացված բողոքում նշված է.

«I. Բողոքի հիմքում դրված փաստերը

1. 2021թ. դեկտեմբերի 5-ին Թալին խոշորացված համայնքում տեղի են ունեցել ավագանու ընտրություններ, որին մասնակցել են՝ «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցությունը (այսուհետ՝ **Զարթոնք**), «Հայք» լիբերալ կուսակցությունը (այսուհետ՝ **Հայք**), «Մեր համայնքը» կուսակցությունների դաշինքը (այսուհետ՝ **Մեր համայնք**) և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը (այսուհետ՝ **ՔՊ**):

2. Ընտրությունների արդյունքներով, ընդհանուր 21 մանդատը բաշխվել է հետևյալ կերպ՝

1) Զարթոնք-6 մանդատ.

2) Հայք-3 մանդատ.

3) Մեր համայնքը-2 մանդատ.

4) ՔՊ-10 մանդատ:

3. Հայքի ընտրական ցուցակի 1-ին համարի ներքո գրանցված Կարեն Գրիգորյանը 22.12.2021թ. հրաժարականի դիմում է ներկայացրել:

4. Գագիկ Ավետիքի Ավետիսյանը գրանցված է «Հայք» լիբերալ կուսակցության ընտրական ցուցակի 5-րդ համարի ներքո:

5. Գագիկ Ավետիսյանը 27.12.2021թ. դիմել է թիվ 18 տարածքային ընտրական հանձնաժողովին, խնդրելով մանդատը տրամադրել իրեն:

6. Թիվ 18 տարածքային ընտրական հանձնաժողովն (**այսուհետ նաև՝ Թիվ 18 ՏԸՀ**) առ այսօր չի տրամադրել մանդատը Գագիկ Ավետիսյանին:

II. Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները

Գտնում ենք, որ Թիվ 18 տարածքային ընտրական հանձնաժողովը խախտել է Գագիկ Ավետիսյանի ընտրական իրավունքը, հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ իրավական հարցերը՝

1. Արդյոք ավագանու անդամ Կարեն Գրիգորյանի լիազորությունները դադարեցված են.

2. Արդյոք Թիվ 18 ՏԸՀ պարտավոր է տրամադրել մանդատը ընտրական ցուցակի հերթական անձին:

1. Արդյոք ավագանու անդամ Կարեն Գրիգորյանի լիազորությունները դադարեցված են.

Թալին համայնքի ավագանու անդամ Կարեն Գրիգորյանը նոտարական կարգով վավերացված հրաժարականի մասին դիմում է ներկայացրել Թալինի համայնքապետարանին:

Դիմումի մեջ նշվել է. *«Միաժամանակ հայտնում եմ, որ սույն հրաժարականի ներկայացման պահից իմ՝ որպես Թալին համայնքի ավագանու անդամի լիազորությունները համարվում են դադարեցված:»:*

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***համայնքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են, եթե նա հրաժարական է տվել:***

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում,*** բացառությամբ 7-րդ կետի, ***ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են օրենքի ուժով, ...:***

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 5-րդ գլուխը սահմանում է տեղական ինքնակառավարման **<u>առանձնահատկությունները</u>** համամասնական ընտրակարգով ընտրվող ավագանի ունեցող համայնքներում:

Հետևաբար, եթե 5-րդ գլխում այլ կարգավորում նախատեսված չէ, գործում են «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի ընդհանուր դրույթները:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի (այսուհետ նաև՝ ՏԻՄ օրենք) 70-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ ***ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են, եթե նա հրաժարական է տվել:***

ՏԻՄ օրենքի 5-րդ գլխում ավագանու անդամի հրաժարականի հիմքով լիազորությունները դադարեցված համարելու ժամանակի (պահի) մասին որևէ այլ կարգավորում առկա չէ, հետևաբար գործում է ՏԻՄ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը:

Ամփոփելով վերոգրյալը գտնում ենք, որ Կարեն Գրիգորյանի ավագանու անդամի լիազորությունները համարվում են վաղաժամկետ դադարեցված օրենքի ուժով՝ 22.12.2021 թվականից՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի:

2. Արդյոք Թիվ 18 ՏԸՀ պարտավոր է տրամադրել մանդատը ընտրական ցուցակի հերթական անձին:

ՏԻՄ օրենքի 70-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում, բացառությամբ 1-ին կետով նախատեսված դեպքի, համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա համայնքի ղեկավարը կազմում է ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին արձանագրություն և յոթ աշխատանքային օրվա ժամկետում ուղարկում տարածքային ընտրական հանձնաժողով:*

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Թալին համայնքի ղեկավարը չի ստանձնել իր լիազորությունները, հետևաբար իրավաբանորեն հնարավոր չէ իրագործել ՏԻՄ օրենքի 70-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում այդ մանդատը տարածքային ընտրական հանձնաժողովի որոշմամբ մեկշաբաթյա ժամկետում տրվում է համապատասխան կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուին՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով: Եթե վերջինս հրաժարվում է մանդատից, ապա նա հանվում է թեկնածուների ցուցակից: Եթե ցուցակում այլ թեկնածու չկա, ապա մանդատը մնում է թափուր:*

Այս իրավանորմը ինքնավար ձևով կարգավորում է այն հարաբերությունը, երբ վաղաժամկետ դադարեցված է ավագանու անդամի լիազորությունները, և այս իրավանորմում համայնքի ղեկավարի որևէ գործողության կամ այլ ձևականությունների մասին նշում առկա չէ, հետևաբար այս իրավանորմը պետք է կիրառվի, երբ առկա կլինեն դրանում նշված փաստակազմը:

Մեր դեպքում, Թիվ 18 ՏԸՀ-ում ներկայացվել է Կարեն Գրիգորյանի հրաժարականի դիմումի պատճենը՝ Թալինի համայքապետարանի դրոշմակնիքով ստացված, ինչպես նաև Գագիկ Ավետիսյանի դիմումը՝ մանդատն իրեն փոխանցելու մասին:

Այս պարագայում, Թիվ 18 ՏԸՀ-ն պարտավոր էր մեկշաբաթյա ժամկետում՝ հաշված 27.12.2021 թվականի (դիմումը հանձնելու օրվա) հաջորդ օրվանից՝ 28.12.2021 թվականից մինչև 04.01.2021 թվականը, որոշում կայացնել, ինչը չանելով խախտել է Գագիկ Ավետիսյանի իրավունքը:

III. Պահանջը

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 69-րդ և 76-րդ հոդվածների պահանջները,

Խնդրում ենք՝

1. Ոչ իրավաչափ ճանաչել թիվ 18 տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից Գագիկ Ավետիսյանին՝ լիազորությունները դադարեցված Կարեն Գրիգորյանի մանդատը մեկ շաբաթյա ժամկետում, չփոխանցելու անգործությունը.

2. Հանձնարարել թիվ 18 տարածքային ընտրական հանձնաժողովին՝ ընդունելու նոր վարչական ակտ՝ Թալին համայնքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցված Կարեն Գրիգորյանի մանդատը «Հայք» լիբերալ կուսակցության ընտրական ցուցակի 5-րդ համարի ներքո գրանցված Գագիկ Ավետիսյանին փոխանցելու վերաբերյալ:»:

Բողոքին կից ներկայացվել են՝ 22.12.2021թ.Կարեն Գրիգորյանի՝ հրաժարականի մասին դիմումի պատճենը, 27.12.2021թ. Գագիկ Ավետիսյանի՝ թիվ 18 ՏԸՀ-ին ուղղված դիմումի պատճենը, լիազորագրի բնօրինակը և արտոնագրի պատճենը:

2. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, ուսումնասիրելով դիմումը և կից փաստաթղթերը, պարզել է, որ դիմումը ներկայացված է ներկայացուցչի միջոցով և ստորագրված է Արաքս Վարդանյանի կողմից: Նիստին ներկայացել է Գագիկ Ավետիսյանի ներկայացուցիչ, փաստաբան Արաքս Վարդանյանը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը թիվ 18 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից պահանջել և ստացել է Կարեն Գրիգորյանի և Գագիկ Ավետիսյանի դիմումների և թիվ 18 տարածքային ընտրական հանձնաժողովի պատասխան գրությունների պատճենները:

«Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները» բաժնում ներկայացված պնդման համաձայն բողոքաբերը գտնում է, որ. «Թիվ 18 տարածքային ընտրական հանձնաժողովը խախտել է Գագիկ Ավետիսյանի ընտրական իրավունքը»: Միևնույն ժամանակ ներկայացրել է բողոքի քննության համար, ըստ իրեն, էական նշանակություն ունեցող երկու իրավական հարցեր, այն է՝ «Արդյոք ավագանու անդամ Կարեն Գրիգորյանի լիազորությունները դադարեցված են», և երկրորդ՝ «Արդյոք Թիվ 18 ՏԸՀ պարտավոր է տրամադրել մանդատը ընտրական ցուցակի հերթական անձին»:

Սույն վարույթի շրջանակներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հարկ է համարում ներկայացնելու «ընտրական իրավունք» հասկացության սահմանադրաիրավական հիմքերը և դիտարկելու բողոքում ներկայացված

հարցադրումները «ընտրական իրավունքի» և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի լիազորությունների իրացման համատեքստում:

Ընտրական իրավունքը՝ ընտրելու իրավունքը (ակտիվ ընտրական իրավունք) և ընտրվելու իրավունքը (պասիվ ընտրական իրավունք) կարելի է համարել քաղաքացու քաղաքական հիմնարար իրավունքներից մեկը, որի կենսագործման կառուցակարգերն ու ընթացակարգերը, այդ թվում նաև սահմանափակման կառուցակարգերը և ընդհանուր չափանիշները, սահմանված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք):

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 48-րդ հոդվածն ամրագրում է.

«1. Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք:

2. Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու, տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Օրենքով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը:

4. Ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:»:

Եվ՛ օրենսդրությունը, և՛ տեսությունը կիրառում են «ընտրական իրավունք» եզրույթը երկու իմաստով՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ իմաստով ընտրական իրավունքն ընտրական գործընթացների և սուբյեկտիվ ընտրական իրավունքի իրացման կարգավորմանն ուղղված իրավանորմերի համակցությունն է: Սուբյեկտիվ իմաստով ընտրական իրավունքը քաղաքացուն (անձին) պատկանող ընտրելու և ընտրվելու իրավունքն է, ինչպես նաև ընտրական գործընթացներին այլ կերպ՝ մասնակցությունն ապահովելուն ուղղված իրավունքների համակցությունը:

Ընտրական գործընթացի մասնակիցների լիազորությունները (իրավունքներն ու պարտականությունները) տարբերվում են ըստ ծավալի, կառուցվածքի և իրավական կարգավիճակի:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված ընտրական իրավունքի կիրառումն ապահովող օրենսդրական կառուցակարգերը սահմանված են Ընտրական օրենսգրքով, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ենթաօրենսդրական ակտերով և այլ իրավական ակտերով:

Ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածը սահմանում է.

«1. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն ընտրության օրը (այսուհետ՝ քվեարկության օրը) 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը 18 տարին լրացած՝ ընտրությունն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում՝

1) մինչև քվեարկության օրն առնվազն 6 ամսվա հաշվառում ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները.

2) մինչև քվեարկության օրն առնվազն վեց ամսվա հաշվառում չունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք համայնքում հաշվառվել են պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելու կամ ազատազրկման ձևով պատիժը կրելուց ազատվելու հանգամանքներով պայմանավորված.

3) մինչև քվեարկության օրն առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացիություն չունեցող ընտրող):

3. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ սույն օրենսգրքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված իրավունքներն ու պարտականությունները տարածվում են նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձանց վրա:

4. Ընտրելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:»:

Ընտրական օրենսգրքի 129-րդ հոդվածի համաձայն համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանու անդամի թեկնածուներ առաջադրելու իրավունք ունեն կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները:

Հարկ է նկատել, որ Գագիկ Ավետիսյանը, իրացնելով իր պասիվ ընտրական իրավունքը, «Հայք» լիբերալ կուսակցության ընտրական ցուցակով առաջադրվել և գրանցվել է որպես ավագանու անդամի թեկնածու և քվեարկվել է Արագածոտնի մարզի Թալին համայնքի 2021 թվականի դեկտեմբերի 5-ի համամասնական ընտրակարգով անցկացված ընտրություններում: Թեև նշված փաստական հանգամանքը բողոքաբերի կողմից չի վիճարկվում, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ բողոքում ներկայացված պնդումն առ այն, որ «խախտել է Գագիկ Ավետիսյանի ընտրական իրավունքը» անհիմն է, քանզի պասիվ ընտրական իրավունքի իրացման տեսանկյունից, Գագիկ Ավետիսյանն իրացրել է Ընտրական օրենսգրքով թեկնածուին վերապահված իրավունքներն ու երաշխիքները, հետևապես, որևէ խախտում պասիվ ընտրական իրավունքի մասով առկա չէ:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում ակտիվ ընտրական իրավունքով օժտված լինելը հնարավորություն է տալիս անձին իրացնելու պասիվ ընտրական իրավունքը, ինչպեսի հանգամանքը չի վիճարկվում բողոքաբերի կողմից: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ Գագիկ Ավետիսյանը սահմանված կանոնակարգումների համաձայն ընդգրկված է եղել ընտրողների ցուցակում և իրացրել է ընտրելու իր իրավունքը, հետևապես, ակտիվ ընտրական իրավունքի մասով խախտում ևս առկա չէ:

Բողոքում ներկայացված երկու հարցերի առնչությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ առաջին հարցը. «Արդյոք ավագանու անդամ Կարեն Գրիգորյանի լիազորությունները դադարեցված են» չի հանդիսանում Ընտրական օրենսգրքի կարգավորման առարկա, ուստի, նշված հարցի վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել ընտրական հանձնաժողովներն իրավասու չեն:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է.

«1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն.

«1. Վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը:

2. Վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով:»:

Ակնհայտ է, որ վարչարարության օրինականության սկզբունքի համաձայն վարչական մարմիններն իրենց գործառույթներում ազատ չեն, այլ կապակցված են իրավունքով և օրենքով: Այսինքն, վարչական մարմինը որևէ լիազորություն իրականացնելու համար պետք է լիազորված լինի օրենքով կամ օրենքով սահմանված դեպքում՝ նաև այլ իրավական ակտով: Ընտրական հանձնաժողովներին վերապահված

հիմնական իրավասություններն ու լիազորությունները սահմանված են Ընտրական օրենսգրքով:

Ընտրական օրենսգրքի 141-րդ հոդվածի 8-րդ մասը սահմանում է.

«Մանդատից հրաժարված կամ ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը համապատասխան ընտրական հանձնաժողովի արձանագրությամբ այդ մասին հանձնաժողովին իրազեկելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, տրվում է այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուին, իսկ եթե դրա արդյունքում տվյալ խմբակցության որևէ սեռի ներկայացուցիչների թիվը նվազում է և արդյունքում ցածր է լինելու 25 տոկոսից, ապա տրվում է այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի նվազ ներկայացված սեռի հաջորդ թեկնածուին, եթե կա:

Եթե ընտրական ցուցակում այլ թեկնածու չկա, ապա մանդատը մնում է թափուր:»:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է.

«4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում, բացառությամբ 1-ին կետով նախատեսված դեպքի, համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա համայնքի ղեկավարը կազմում է ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին արձանագրություն և յոթ աշխատանքային օրվա ժամկետում ուղարկում տարածքային ընտրական հանձնաժողով:»:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 4-րդ մասով հստակ սահմանվում է, որ համամասնական ընտրակարգով ընտրված ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ պետք է կազմվի արձանագրություն, արձանագրությունը պետք է կազմվի համայնքի ղեկավարի կողմից և սահմանված ժամկետում իրավասու մարմնի կողմից ուղարկվի տարածքային ընտրական հանձնաժողով, որից հետո միայն համապատասխան ընտրական հանձնաժողովն իրավասու է իրականացնելու Ընտրական օրենսգրքի 141-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջների կատարումը:

Վկայակոչված իրավանորմերից ակնհայտ է, որ ընտրական հանձնաժողովի կողմից լիազորությունները վաղաժամկետ դադարեցված ավագանու անդամի մանդատը կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուին տալու պարտավորության իրականացման իրավական հիմքը համայնքի ղեկավարի կազմած՝ ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին, արձանագրությունն է:

Ընտրական օրենսգրքի 141-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն. «Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված անձանց կողմից ներկայացված ինքնաբացարկի կամ մանդատից հրաժարվելու դիմումները

վավերացվում են նոտարական կարգով, կամ համապատասխան դիմումը անձը հաստատում է ընտրական հանձնաժողովի նիստում: Նոտարական կարգով վավերացված՝ ինքնաբացարկի կամ մանդատից հրաժարվելու մասին դիմումը սույն հոդվածի իմաստով համարվում է վավեր, եթե այն ընտրական հանձնաժողով է ներկայացվում վավերացվելուց հետո՝ առավելագույնը եռօրյա ժամկետում»:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են, եթե՝ նա հրաժարական է տվել: Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է հրաժարականի ներկայացման կարգը, ինչպես նաև այն իրավասու սուբյեկտին, ում ներկայացվում է հրաժարականը: Նշված դրույթով, մասնավորապես, սահմանվում է. «Ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը անձամբ ներկայացնում է համայնքի ղեկավարին, որն այն հրապարակում է ավագանու առաջիկա նիստում: Ավագանու անդամի կողմից իր դիմումն անձամբ համայնքի ղեկավարին ներկայացնելու անհնարինության դեպքում հրաժարականի դիմումը ներկայացնում է խմբակցության ղեկավարը կամ ավագանու անդամի ներկայացուցիչը»:

Վկայակոչված իրավանորմերի համակարգային վերլուծությամբ ակնհայտ է դառնում, որ համամասնական ընտրակարգով ընտրված և արդեն իսկ մանդատ ստացած ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման և մանդատի փոխանցման իրավակարգավորումներն էականորեն տարբերվում են մինչև մանդատ ստանալը թեկնածուի կողմից ներկայացվող ինքնաբացարկի կամ մանդատ ստանալուց հրաժարվելու իրավակարգավորումներից:

Ընտրական օրենսգրքի 141-րդ հոդվածի 9-րդ մասի իրավակարգավորումը վերաբերում է բացառապես ընտրական ցուցակում ընդգրկված անձանց, քանզի ընտրական ցուցակում ընդգրկված և արդեն իսկ մանդատ ստացած անձը հանդիսանում է ավագանու անդամ, որի կարգավիճակը էականորեն տարբերվում է ընտրական ցուցակում ընդգրկված անձանց կարգավիճակից: Ավելին, ավագանու անդամի լիազորությունների ստանձնման և լիազորություններից հրաժարվելու իրավահարաբերությունները չեն հանդիսանում ընտրական իրավահարաբերություն-ներ, ուստիև չեն հանդիսանում ընտրական օրենսդրության կարգավորման առարկա:

Ելնելով վերոնշյալից՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ թիվ 18 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պարտավոր է ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարեցված ավագանու անդամի մանդատը տալ ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուին, բացառապես համապատասխան արձանագրության հիմքով: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ թիվ 18 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի գործողություններն իրավաչափ են, բխում են Ընտրական օրենսգրքի պահանջներից, հետևապես, անգործության դրսևորում առկա չէ:

Նկատի ունենալով, որ սույն բողոքով ներկայացվել է նաև պարտավորեցման պահանջ. «հանձնարարել թիվ 18 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին՝ ընդունելու նոր վարչական ակտ՝ Թալին համայնքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցված Կարեն Գրիգորյանի մանդատը «Հայք» լիբերալ կուսակցության ընտրական ցուցակի 5-րդ համարի ներքո գրանցված Գագիկ Ավետիսյանին փոխանցելու վերաբերյալ», Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, քանի դեռ առկա չէ ավագանու անդամի սահմանված կարգով լիազորությունների վաղաժամկետ դադարեցման փաստի արձանագրումը և սույն որոշմամբ վկայակոչված իրավակարգավորումներին համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին արձանագրության ուղարկման փաստի առկայությունը, չի կարող ծագել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի՝ Ընտրական օրենսգրքի 141-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված պարտավորությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 47-49-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Գագիկ Ավետիսյանի ներկայացուցիչ Արաքս Վարդանյանի 2022 թվականի հունվարի 5-ին ներկայացրած բողոքը մերժել ամբողջությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ.Մուկուչյան**